



Նկ. Յ. Անիի Դաղկաշեն բոլորակ եկեղեցու բանգակներից

ուտանալ խճանկարի ամբողջական և հարազատ պատկերը։ Թե՛ գոտու և թե՛ ֆոնի երկրաչափական ձևերի զարդական հյուսքը հորինված է մասնագիտական հմտությամբ և բարձր ճաշակով։ Դա ցույց է տալիս, որ X—XIV դարերի ընթացքում մեր հարաբարգնտական և խաչքարային հուշարձանների վրա ծաղկող այնքան ինքնատիպ և բարձրարժեք արվեստն ունեցել է իր դարավոր, ավանդական խոր արմատները։

Ա. ՊԱՏԿԱՆՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ II-Ի ՁՈՐԵՔԴՐԱՄՅԱՆԸ

1959 թ. ապրիլի 27-ին, Հայկական ՍՍՌ Էջմիածնի շրջանի Փարաքար գյուղի մոտ, այժմյան գինեգործության ինստիտուտի փորձադաշտից մի փոքր արևմուտք, հնամյա շինության փլատակների մեջ գտնվեց հայոց թագավոր Արտավազդ II-ի (56—34) մի արծաթե դրամ[1]։ Շուրջ 2000 տարվա վաղեմություն ունեցող փոքրիկ այս վկայությունը բարեբախտաբար շատ լավ է պահպանվել և նրա վրա դրվագված պատկերները, գրությունները, զարդանշաններն ու խորհրդանշանները դիտվում են հստակությամբ։ Այն ներկայումս պահվում է Հայկական ՍՍՌ պետական պատմական թանգարանում[2]։ Դրամի վրա մենք տեսնում ենք հետևյալը.

Ա կողմում պատկերված է երիտասարդ Արտավազդը՝ մինչև ուսերը, դեպի աջ նայող ածիլված կիսադեմքով, գլխին՝ հայկական թագը, թեթևակի կոնաձև, վերևում ավարտված հինգ ժանիքաձև ճառագայթներով։ Թագի կենտրոնական մասը զարդարված է ութ թևանի աստղով, վերցրված մարգարտաշար քառանկյուն շրջանակի մեջ, որի ձախ և աջ կողմերում կա մեկական բուսական զարդանշան։ Ականջակալները վերև են բարձրացված ու շրջված են իրար վրա հակառակ կողմերից՝ ամրացված ճակատային հատվածում։ Արքայի մի թունիից մյուսն անցնում է վարսակալ-ժապավեն, որի ծայրերը հանգուցված են ծոծրակին և վզկալի վրայով ազատ արձակած իջնում են մինչև ուսերը։ Արտավազդն ականջին կրում է օղ, վզին՝ երկու շարք մանյակ, աջ ուսի վրա հանգուցված է արքայական ծիրանին։ Թագի և նրա հետ միացված ինչպես վզկալի, այնպես էլ վերև բարձրացած ականջակալների երիզները զարդարված են մարգարտի հատիկներով։ Բարձրաքանդակ այս պատկերը վերցված է երկարավուն ուլունքներից բաղկացած շրջանակի մեջ։ Բ կողմում պատկերված է արշավող քառաձի մար-

1 Դրամագյուտին վերաբերող մանրամասնությունները տե՛ս «Երևան» թերթի 1959 թ. № 97-ում, ինչպես նաև „Коммунист" թերթի 1961 թ. № 161-ում։

2 Հայաստանի պատմության պետական թանգարան, դրամագիտության բաժին, № 17579։

տակաոք, որի վրա կանգնած է մարդկային մի կերպարանք ոլխին՝ ճառագայթաձև պսակ, բռնած ձիերի սանձը, ուղղությունը դեպի ձախ։ Արձանագրությունը՝ վերևում ΒΑΣΙΛΕΩΣ ‖ ΒΑΣΙΛΕΩΝ, ներքևից ΑΡΤΑΥΑΖΔΕΩ ‖ ΘΕΙΟΥ, ձիերի առջևում մենագիրը՝

որի տակ՝ ΙΗ գրերը։ Այս ամենը վերցված է 13 խոշոր բոլբոջաձև հատիկներից բաղկացած շրջափակ պսակի մեջ, որի ծայրերը ներքևում միացված են երկու երկարավուն օղակներով։



Արտավազդ II-ի չորեքդրամյանը (բնական մեծությամբ)

Դրամը բարձր որակի արծաթից է, կշիռը՝ 14,85 գրամ, տրամագիծը՝ 27—28 միլիմետր, հաստությունը՝ 2—2,5 միլիմետր, կնիքների առանցքային հարաբերությունն ուղղված է դեպի վեր ↑

Արտավազդ II-ի այս արծաթե դրամն իր կշռային չափով չորեքդրամյան է։ Հայաստանի դրամական տնտեսության մեջ այդ ժամանակաշրջանում ընդունված էր Առաջավոր Ասիայում դեռևս մ. թ. ա. 4-րդ դարի վերջերից լայն տարածում գտած էվրեյո-Ատտիկյան դրամական սիստեմը։ Վերջինիս սկզբունքով թողարկվում էին ոսկյա, արծաթյա ու պղնձյա դրամներ։ Հիմնական միավորը ոսկու ատպարեզում ստատերն էր 8,60—8,65 գրամ։ Կրկնակի ստատերները և ստատերի ստորաբաժանումները (1/2, 1/4, 1/6, 1/12 և 1/24 մասերը) խիստ հազվագյուտ են և շրջանառության մեջ ունեցել են առավելապես հաշվային նշանակություն։ Վաղ հայկական ոսկյա դրամներ, որոնք մեզ հայտնի է, Հայաստանի տերիտորիայում դեռևս չեն հայտնաբերվել։

Արծաթի շրջանառության մեջ հիմնական միավորը դրախման էր (դրամը), որն այդ նույն սիստեմի համաձայն թողարկվում էր 4,36 գրամ բաշով։ Թողարկվում էին մեկ դրամյաններ, երկդրամյաններ, չորեքդրամյաններ, տասդրամյաններ և արծաթե դրամյանի փոքր մասերը կազմող դրամանիշներ*։

Առօրյա առևտրի մեջ առավել գործածական էին գլխավորապես մեկ դրամյաններն ու չորեքդրամյանները, իսկ երկդրամյանները, տասդրամյանները, ինչպես նաև դրամի ստորադասվող 1/2, 1/4, 1/6 և ավելի փոքր մասերը խիստ հազվադեպ են և բնորոշ համարվել չեն կարող։ Հելլենիստական դարաշրջանում ոսկու և արծաթի փոխհարաբերությունը նշվում է 1:10 չափով, կամ մեկ ոսկյա ստատերը համազոր էր 20 արծաթե մեկ դրամյանի, կամ 5 չորեքդրամյանի։ Ինչ վերաբերում է Ատտիկյան սիստեմով թողարկվող պղնձյա դրամներին, ապա դրան-

* Ատտիկյան սիստեմում բարձրագույն դրամական միավորը Տաղանտն էր, որն արծաթե դրամի կշռային հաշվով հավասար էր 6000 դրախմայի կամ 60 Մանայի։ Ապրանքափոխանակության մեջ Տաղանտն ու Մանան ունեին լոկ հաշվային նշանակություն։

Արծաթե դրամի փոքր մասերն արտահայտվում էին օբոլներով, ընդ որում օբոլը կազմում էր դրամի 1/6 մասը։ Դասակարգվում էին 1, 1 1/2, 2, 3, 4, 5 օբոլներ։ Դրամի արտոնումն առավել փոքր (1/8, 1/12, 1/24 և 1/48) մասնիկների, որոնք նույնպես արտահայտվում էին օբոլի (3/4, 1/2, 3/8, 1/4 և 1/8) բաժիններով, որոշ դեպքերում հնարավորություն էր ընձեռում գերծ մնալու պղնձյա դրամներ թողարկելուց։

ցից որոշակի են երկու միավոր՝ Խալկը և Լեպսան, ըստ որում վերջինս կազմել է Խալկի 1/7 մասը։

Պղնձյա դրամների քաշը խիստ փոփոխական էր։ Արծաթյա ու պղնձյա դրամների հարաբերությունը նշվում է 1:110, երբեմն 1:40 կամ 1:30 չափերով։ Խոշոր առևտրական գործարքները կատարվում էին արծաթյա դրամների ամենատարածված ու մասսայաբար թողարկվող միավորներով՝ դրամյաններով ու չորեքդրամյաններով։

Ներկա դեպքում անհրաժեշտ է նշել այն իրողությունը, որ Արտավազդ II-ի իշխանության տարիներին թողարկված չորեքդրամյաններն արտակարգ հազվադեպ են։ Փարաքարի մոտ գտնված այս նմուշն առաջին արձանագրված գյուտն է ոչ միայն Հայկական ՍՍՌ, այլ ամբողջ Սովետական Միության մեջ և, հավանաբար, վերջինիս սահմաններից դուրս։

Համեմատելով այս նորահայտ չորեքդրամյանը Արտավազդ II-ի՝ Հայաստանում գտնված և գրականության մեջ հայտնի արծաթե այլ դրամների հետ, նախ և առաջ կտեսնենք ձևավորման ընդհանրություն, չնայած ինքների տարբերության։ Ընդհանուրն այն է, որ այս դրամի վրա ևս, սակայն առավել հստակ և մեծադիր, Արտավազդը ներկայացված է Արտաշեսյան թագավորության վաղուց հայտնի նշաններով. վարսակալ, թագ, ծիրանի, ականջին՝ օղ, պարանոցին՝ մանյակներ, ըստ որում ցույց են տրված մանյակների երկու շարք՝ ի տարբերություն որոշ օրինակների, որոնց վրա մանյակները օղակում են արքայի պարանոցը երեք շարքով։ Ընդհանուր է նաև այն, որ ինչպես միշտ, այնպես էլ այս օրինակում Արտավազդը գլխին կրելով իր հոր՝ Տիգրան Մեծի օրոք արդեն ավարտված ձևով ինքնատիպ հայկական թագը, որը տարբերվում էր ժամանակակից բոլոր թագերից, բարձրացրել է նրա ականջակալները ու ծալել դրանք ճակատային մասում՝ իրար հակառակ ուղղություններով։ Այդ ծալվածքը ոչ թե թեքությամբ կամ խաչաձև է, ինչպես Արտավազդի ուրիշ դրամներից գիտենք, այլ ուղիղ գծով, աստիճանական նստվածքով իրար վրա ամրացված։ Բարձրացված ականջակալները այս անգամ ևս հնարավորություն են ավել ցույց տալու հայոց արքայի ականջի օղը և ողջ պարանոցը, որոնք Տիգրան Մեծի դրամների վրա ծածկված էին մնում։

Առավել ուշագրավ է մի այլ հանգամանք. ինչպես Տիգրան Մեծի, այնպես էլ Արտավազդ II-ի նախապես մեզ հայտնի բոլոր դրամների վրա, թագի կենտրոնական մասում, արևի խորհրդանշան հանդիսացող աստղաձև զարդի կողքերին աջից ու ձախից նշված են մեկական արծիվ։ Այս չորեքդրամյանի վրա, սակայն, այդ նույն տեղում արծիվներ չկան։ Դրանք վերացված են, փոխարենը այդ նույն տեղերում նշված են թերևս բուսական (?) ձևի զարդեր, որպիսիք մենք չենք տեսել մեզ հայտնի հելլենիստական շրջանի հայկական և ոչ մի դրամի առաջին կողմի վրա։ Քանդակագործը, որ հունական դպրոցի ռեալիստական բարձր արվեստով կերտել է հայոց թագավորի բարձրաքանդակ այս պատկերը՝ արքայական զարդերի մանրամասնություններով, հագիվ թե չկարողանար պետության դերագույն խորհրդանշան հանդիսացող թագի կենտրոնական մասի երկու որոշակի հատվածներից գոնե մեկում, թեկուզ և սխեմատիկ ձևով, ցույց տալ արծիվը։ Մենք չենք կարող ասել, թե տվյալ օրինակում այդ մասերը ավերված են կամ նշված զարդաձևերը չեն երևում։ Ընդհակառակը դրանք դիտվում են, բայց ոչ երբեք արծիվներ կամ թռչնաձև նշաններ, այլ ավելի շուտ բուսական կամ մեզ համար դեռևս անորոշ նախշեր, որոնց վերաբերյալ առայժմ ձեռնպահ ենք մնում որևէ անուն տալուց։ Արծիվների վերացումը և նրանց փոխարինումը ուրիշ, իր ժամանակի համար հայտնի, բայց մեզ համար անհայտ, նշաններով, ինքնըստինքյան որոշակի փոփոխություն է, որ կատարվել է Արտավազդ II-ի օրոք հայկական թագի զարդարանքների մեջ։

Փոփոխություններ նկատվում են նաև դրամի երկրորդ երեսի ընդհանուր կոմպոզիցիայի մեջ։ Նախ և առաջ այստեղ չի ներկայացված հաղթանակի աստվածուհու պատկերը, որ պսակ էր մեկնում մարտակառքին կանգնած տղամարդուն՝ հավանաբար Արտավազդին, նրա այլ դրամների վրա։ Սակայն այս օրինակում քառաձի մարտակառքի վարողը գլխին կրում է ճառագայթաձև զարդ։ Վերջինիս առկայությունն իր վեց աղեղնաձև գծերով, որոնք կենտրոնից տարածվում են դեպի շրջապատը, նման չէ Արտավազդի մեզ հայտնի այլ դրամներից այդ նույն տեղում նշված գլխարկի ձևին։ Այստեղ հասկացվում է թերևս ամբողջական մի լուսապսակ, որով զարդարված է մարտակառքի վրա կանգնած մարդկային գլուխը։ Բացառված չէ այն հնարավորությունը, որ ներկա դեպքում պատկերված է արևի աստվածության գաղափարը։ Հելլենիստական էպոխայում արևի կարծեցյալ աստվածը պատկերվում էր քառաձի մարտա-

3 Հ. Վարդան Վ. Հացունի, Պատմութիւն հին հայ սարազի, Վենետիկ—Ս. Ղազար, 1923, էջ 65։

կառքով, որով ենթադրվում էր նրա սավառնումը երկնակամարում։ Հեթանոսական Հայաստանում արևի աստծու՝ Արեգ-Միհրի պաշտամունքը լայն տարածում ուներ։ Արտաշեսյան թագավորները կապում էին իրենց ծագումը Արևի աստծու հետ և համարում էին նրան իրենց հովանավորողը։ Մինչև հաղթանակի աստվածուհու իմաստավորված պատկերը ընդհանրապես Արտավազդի դրամների վրա նախասիրված մոտիվ էր, ուստի նրա բացակայությունը այս չորեքդրամյանի վրա նկատվում է անմիջապես։

Հայոց միապետը իր այս չորեքդրամյանի արձանագրությամբ, հռչակված է ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ (արքայից արքայի) տիտղոսով, որպիսի անունով հայտնի էր նրա հայրը՝ Տիգրան Մեծը։

Արտավազդ II-ի իշխանության տարիներին թեև հիշյալ տիտղոսաձևը վաղուց դադարել էր Արտաշեսյանների մենաշնորհը լինելուց, բայց այն պահպանվել էր ու շարունակում էր տարածվել թողարկվող հայկական դրամներով։ Սակայն այս օրինակում արքայի անունը գրված է սեռական հոլովի արխաիկ ձևով* ΑΡΤΑΥΑΖΔΕΩ և ոչ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ, որպես նշվում էր սովորաբար։ Ընդհանրապես հելլենիստական շրջանի թե՛ հայկական և թե՛ սելևկյան ու պարթևական դրամների վրա միապետների անունները գրվում էին սեռական հոլովի ձևով։ Ուշադրության արժանի է նաև այն, որ անմիջապես ΑΡΤΑΥΑΖΔΕΩ անվան տակ գրված է ΘΕΟΥ (թեու=աստվածայնի) բառը, որով և ավարտվում է դրամի երկրորդ կողմի գրքիավոր արձանագրությունը։ Մինչև օրս մեզ հասած հելլենիստական էպոխայի հայկական դրամներից և ոչ մեկի վրա ΘΕΟΥ գրությունը իր այս սեռական հոլովի ածականային ձևով չի տրվել։ Այն հանդես է եկել որպես գոյական ΘΕΟΥ, որով և ներկայացված է Տիգրան Մեծին վերագրված պղնձյա դրամի վրա[4] ու այնուհետև՝ Հայաստանի գահին հռոմեացիների կողմից նշանակված Արտավազդ III-ի (5—2) և Օգոստոս կայսեր պատկերներով արծաթե դրամների վրա[5], ըստ որում այդ վերջինում ΘΕΟΥ խոսքը վերաբերում էր Հռոմի իշխանությանը. ΘΕΟΥ ΚΑΙΣΑΡΟΣ ΕΥΕΡΓΕΤΟΥ (=աստծո կայսեր բարերարի)։

Բացի այս երկու դեպքերից, այդ տիտղոսի գործածման ուրիշ օրինակներ, ըստ որում ΘΕΟΥ ձևով, վաղ հայկական դրամներից մեզ հայտնի չեն։ Հարկ է նկատել, որ Հայաստանից դուրս թողարկված, սակայն Հայաստանում շրջանառության մեջ եղած Սելևկյան ու Պարթևական դրամների վրա նույնպես ΘΕΟΥ տիտղոսաձևը չի օգտագործվել։ Ընդհանրապես Սելևկյան ու Պարթևական խմբի դրամներում թագավորներին վերաբերող տիտղոսները շատ ավելի երիներանգ են եղել, բայց նույնպես միշտ նշվել են գոյականի սեռական հոլովով։ Մասնավորապես ΘΕΟΥ (=աստծո) բառը սեռական հոլովով արտացոլված է Սելևկյան թագավորության Անտիոքոս I (281—261) Սոտերի[6], Անտիոքոս IV (175—164) Եպիփանոսի[7], Ալեքսանդր I (150—145) Բալայի[8], Դեմետրիոս II-ի (145—140 և 130—125)[9] ու Դեմետրիոս III-ի (95—88) դրամների վրա[10]։ Այդ են վկայում նաև պարթևական Տրդատ I (248—210)[11], Միհրդատ II (128—88)[12] և Հրահատ III (70—57) թագավորների դրամները[13]։

---

* С. И. Соболевский, Древне-греческий язык. Москва, 1948, էջ 30 (II аттическое склонение).

[4] Henri Seyrig. Tresor monetaire de Nisibe, Paris, 1955, էջ 118 [„Extrait de la Revue Numismatique", 1955, էջ 85—128]; Georges Le Rider. Monnaies grecques acquises par le Cabinet des Médailles en 1959, էջ 25 [„Extrait de la Revue Numismatique", 1959—1960, էջ 7—35]. Paris, 1960.

[5] Կ. Յ. Բասմաջյան, Հայկական ընդհանուր դրամագիտության և Հայաստանի վերաբերյալ դրամներ, Վենետիկ, 1936, էջ 41, նկար № 19։

[6] M. Ernest Babelon, Catalogue des monnaies grecques de la Bibliothèque Nationale, les rois de Syrie, d'Armenie et de Commagène, Paris, 1890, XLI—XLII.

[7] Նույն տեղում, էջ XCIII, XCIV, XCVIII, 68—71, 226։

[8] Նույն տեղում, էջ CXXVI։

[9] Նույն տեղում, էջ 127, 128, 134—160, 221—224։

[10] Նույն տեղում, էջ 206—208, 229։

[11] Alexander R. von Petrowicz, Arsaciden-Münzen, Katalog, Wien, 1904, էջ 199։

[12] Նույն տեղում, էջ 41, № 19, 201։

[13] Նույն տեղում, էջ 47, № № 4, 12, տախտակ № № 13—15։

Արտավազդ II-ի չորեքդրամյանը
(մեծացված 3 անգամ)



Արծաթի դրամներ. 1. Տիգրան մեծի (95—55), 2—4. Արտավազդ II-ի (56—34).
(մեծացված 2 անգամ)

Զուգահեռներ չենք գտնում նաև Հայաստանից շատ հեռու, հելլենիստական աշխարհի Աֆրիկյան ու Միջինասիական մասերում, մասնավորապես Եգիպտոսում[14] և Բակտրիայում[15] թողարկվող դրամների վրա։ Այդ խմբի դրամներում ևս գործածվել է ΘΕΟΥ ձևը, բայց ոչ երբեք ΘΕΙΟΥ, որպիսին արձանագրված է Արտավազդի այս չորեքդրամյանի վրա։ Հետևապես կարելի է նշել, որ ոչ բուն հայկական և ոչ էլ Հայաստանի հետ առնչվող երկրների անտիկ դրամների վրա ΘΕΙΟΥ բառը ածականի ուեռական հոլովով չի ներկայացվել, ուստի Արտավազդի այս չորեքդրամյանը տվյալ իմաստով ևս հետաքրքրական է։ Ժամանակի քաղաքական լոզունգներն առավելապես դրամների միջոցով էին հաղորդվում, որոնք անցնելով միլիոնավոր ձեռքերով, շրջանառության մեջ էին գտնվում ոչ միայն այն երկրում, որտեղ թողարկվում էին, այլև միջազգային առևտրի բերումով թափանցում էին տարբեր երկրներ։

Ուշագրավ է նաև այս դրամի մենագիրը։ Ընդհանրապես մենագրի ընթերցումը ամենադժվար խնդիրն է հին դրամների որոշման գործում։ Մինչև օրս մեզ հասած վաղ հայկական դրամների վրա նշված շատ մենագրեր մնում են դեռևս չլուծված հանելուկներ։ Ենթադրվում է, որ որոշ դեպքերում մենագրերով նշանակվել է քաղաքի կամ երկրի, որպես փողերանոցի, անուն։ Տվյալ դրամի վրա մենագիրը շատ լավ է պահպանվել։ Այն բաղկացած է չորս հավասարաչափ գծիկներից, որոնցից երեքը համարյա զուգահեռ, իսկ չորրորդն ուղղահայաց անցնելով առաջինների միջով, բաժանում է նրանց հավասար մասերի, ըստ որում այդ ուղղահայաց գիծը վերևից ունի մի խոշոր կետ։ Գրաֆիկ ձևով մենագիրը պատկերված է այսպես՝

Վերջինս իր կառուցվածքի հիմնական գծերով նմանություն ունի Հայաստանի տերիտորիայում գտնված Արտավազդ II-ի արծաթ դրամների մենագրերին։ Այսպես օրինակ Սառնակունքի գանձում հայտնաբերված Արտավազդ II-ի դրամները թողարկված են



մենագրով[16]։ Այդ նույն ձևի մենագրով Արտավազդ II-ի արծաթ դրամների եզակի օրինակներ պահվում են պետական Էրմիտաժում[17] և Բրիտանական թանգարանում[18]։

Դնահատելով այդ  մենագիրը որպես քաղաքի կամ փողերանոցի անունն արտահայտող նշան, տակավին իրրև ենթադրական փորձ, թերևս կարելի է տեսնել նրանում ներկայացված առանձին գրերը։ Այսպես օրինակ.

1. Վերցնել այս մենագրից միայն նրա ուղղահայաց գծիկը վերևում ունեցած գլխի հետ, ապա կերևա Ի դրի ձևը։

---

[14] Barclay V. Head, Historia Numorum, Oxford, 1911, էջ 851, 852, 853։ Եգիպտոսում Պտղոմեոս II (285—246), Պտղոմեոս III (246—221) և Պտղոմեոս V (204—181) թագավորների դրամներում այդ բառը օգտագործվել է ΘΕΩΝ ձևով։

[15] Նույն տեղում, էջ 838.

[16] Ա. Շահնազարյան, Միսիանի շրջանի Սառնակունք գյուղի մոտ հայտնաբերված գանձը, էջ 12, նշան 51 (Հայաստանի պետական պատմական թանգարանի աշխատությունների 2-րդ հատոր, Երևան, 1942 թ.)։

[17] Государственный Эрмитаж. Рукописный каталог античных монет, № 19417; M. de Bartholomei. Drachme d'Ardavasde [Memoires de la société d'archéolog. de Saint-Petersb. t. III, էջ 179—181]; V. Langlois, Numismatique Générale de l'Arménie, Paris, MDCCCLIX, էջ 34, pl. III, № 1, M. Ernest Babelon, Նշված աշխ., CCIV fic 43.

[18] W. Wroth, C. B. M., Calatia, Cappadocia and Syria, London, 1899, էջ 110։

2. Նկատի ունենալ միայն վերին հորիզոնական գծիկը և նրան ներքևից միացած ուղղահայացը՝ կստացվի Τ գրի ձևը։

3. Վերցնելով միայն մենագրի երեք հորիզոնական գծիկները, կունենանք Ξ (քսի) գրի գրի հիմնական ձևը։

Այսպիսով մեր առաջ բացահայտվում են Ρ Τ Ξ գրերը, որոնք, հավանաբար, մայրաքաղաք Արտաշատի հունատառ ΑΡΤΑΞΑΤΑ անվան բաղաձայն հնչյուններին համապատասխանող նշանագրերն են։ Α ձայնավորը ենթադրվում է յուրաքանչյուր վանկի մեջ։ Արտաշատ քաղաքի, որպես փողերանոցի, անունը հին հայկական դրամների վրա հաճախ է նշվել։ Սակայն այս ընթերցումը կարող է ընդունելի դառնալ միայն Արտավազդի մեզ հասած բոլոր մենագրերի և դրամներին վերաբերող տոպոգրաֆիկ տվյալների հատուկ քննության հիման վրա, մի խնդիր, որ ենթակա է առանձին ուսումնասիրության։

Բարեբախտաբար հիշյալ մենագրի տակ հստակությամբ պահպանվել են դրամի տարեթիվն արտահայտող ΙΙΙ գրերը։ Այդ թվանշանները ցույց են տալիս, որ դրամը թողարկվել է Արտավազդի իշխանության 18-րդ տարում, այսինքն մ. թ. ա. 37 թ.։ Ընդհանրապես հելլենիստական շրջանի հայկական դրամների վրա տարեթվերը մեծ մասամբ արձանագրվում էին Սելևկյան տոմարի հաշվով։ Սակայն Արտավազդ II-ի օրոր դրամի վրա տարեթվի նշման Սելևկյան սկզբունքը բացառվում է։

Ինչպես տեսնում ենք, այստեղ, ի տարբերություն Սելևկյանների թվականի, տասնավորը և միավորը դասակարգված են ձախից աջ և ստացել են իրենց պարզ նշանակությունը՝ ΙΙΙ=18 որպես տարեթիվ[19]։ Ժամանակագրման այս ձևը նորություն չէր անտիկ աշխարհի դրամներում։ Դեռևս մ. թ. ա. III դարի վերջերին Առաջավոր Ասիայի որոշ թագավորություններում, մասնավորապես Եգիպտոսում և Կապադովկիայում, դրամների թողարկման ժամանակը նշում էին միապետի իշխանության համապատասխան տարով[20]։

Հայկական դրամների համար այս գրելաձևը հաստատվում է նաև ուրիշ նորահայտ վկայություններով։ Այսպես օրինակ, 1955 թ. Մծբինում գտնված գանձի մեջ հայտնվել են Տիգրան Մեծի դրամներ, որոնց ժամանակը նշված է հայոց արքայի գահակալության 16(Ι—ς), 30 (Λ) և 41 (Μ—Α) տարիների թվով[21]։ Հայկական ՍՍՌ պետական պատմական թանգարանում պահվում է Արտավազդ II-ի մի ուրիշ արծաթ դրամ՝ թողարկված Արտավազդի իշխանության Ις=16-րդ տարում[22]։ Դրամագիտության վաղուց հայտնի են Արտավազդ II-ի թագավորության վեցերորդ[23] (ς), յոթերորդ[24] (Ζ) տարիների արծաթ դրամները։

Անտիկ դրամների ժամանակագրման գործում բազմավաստակ Ա. Ն. Զոգրաֆի հետազոտությունները հաստատել են, որ նմանօրինակ թվանշանները համընկել են իշխող միապետի գահակալության համապատասխան տարուն[25]։ Իրոք, ընդունելով այդ ամենը պետք է ենթադրել, որ Արտավազդ II-ի շուրջ քսանմյա թագավորության տարիներին հայոց դրամները ժամանակագրվել են նրա իշխանության համապատասխան տարով, որոնցից մեկն էլ հանդիսանում է այս չորեքդրամյանը իր ΙΙΙ = 18 թվով։ Այս վկայությունը միաժամանակ հնարավորություն է ընձեռում վերագնահատելու վաղ հայկական դրամների ժամանակագրման հարցը։ Միշտ չէ, որ տարեթվերը կարող էին նշվել սելևկյան տոմարի կանոնով։

Ուշադրության արժանի է նաև արձանագրության պալեոգրաֆիան։ Մեր այս չորեքդրամյանի վրա ներկայացված են հունական այբուբենի 17 գրեր, կատարված ուղիղ գծերի և կետերի

---

[19] Fr. Schrotter, Worterbuch der Münzkunde, Berlin, 1930, էջ 753։

[20] А. Н. Зограф, Античные монеты, էջ 87։

[21] Henri Seyrig. Trésor monétaire de Nisibe. Paris. 1955, էջ 87—88, 113, 116։

[22] ՀՍՍՌ պետական պատմական թանգարանի դրամագիտության բաժին, № 8904 (արծաթ № 150)։

[23] Նույն տեղում, № 16022 (արծաթ № 8906)։ H. Seyrig. նշվ. աշխ., էջ 119 (հիշատակվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության ժողովածուն և դասական արվեստների հանդեսը, X, 1873)։

[24] Государственный Эрмитаж, отдел нумизматики, рукописный каталог античных монет № 19417; W. Wroth. C. B. M., Calatia, Cappadocia und Syria, London, 1899, էջ 110։

[25] А. Н. Зограф, նշվ. աշխ., էջ 87։

միջոցով։ Գրելաձևի այդ, այսպես կոչված՝ խիստ ոճը բնորոշ է եղել առավելապես հելլենիստական ժամանակաշրջանի համար և Առաջավոր Ասիայում լայնորեն արտացոլված է մ. թ. ա. IV—I դարերի սելևկյան ու պարթևական դրամների վրա։ Բացառություն է կազմում Ο (ՀԱՍՏԱՏՈՆ) գիրը, որն ավելի արխայիկ ձև ունի։

Դրամի երկու երեսներին նշված երկարավուն բողբոջաձև հատիկներից բաղկացած շրջանակները, որոնցից մեկի մեջ վերցված է Արտավազդի կիսադեմ պատկերը, իսկ մյուսում արձանագրություններն ու արևի աստծո խորհրդանիշ հանդիսացող քառաձի մարտակառքը, անցյալից եկած ղարդաձևեր են, որոնք այնքան հաճախ օգտագործվում էին Տիգրան Մեծի դրամների վրա։ Նրիզափակ այդպիսի շրջանակներով ձևավորվում էին նաև սելևկյան, պարթևական ու հունա-բակտրիական դրամները, և այդ դեկորատիվ տարրերով անգամ երևում է վաղ հայկական դրամների տիպոլոգիական կապը հելլենիստական Արևելքի դրամների հետ։

Ամփոփելով մեր դիտողություններն այս նորահայտ հայկական դրամի վերաբերյալ կարող ենք նշել հետևյալը.

ա. Արտավազդ II-ի այս դրամը նշանակալից լրացում է մինչև օրս մեզ հասած վաղ հայկական դրամների խմբում։ Որպես Արտավազդ II-ի չորեքդրամյան, սա առաջին արձանագրված դյուտն է Հայկական ՍՍՌ տերիտորիայում և նրա սահմաններից դուրս։

բ. Չորեքդրամյանը վկայում է, որ Արտավազդ II-ի իշխանության 18-րդ տարում հայկական թագի արքայական զարդանշանների մեջ կատարվել են փոփոխություններ. թագի կենտրոնական մասում, մինչ այդ որպես կանոն նշված արծիվների պատկերները փոխարինված են բուսական (՞) կամ մեզ համար դեռևս անորոշ նախշերով։

գ. Դրամի վրա արքայի անունը գրված է սեռական հոլովի հին ձևով ΑΡΤΑΥΑΖΔΕΩ՝ ի տարբերություն մ. թ. ա. I դ. գործածված սեռական հոլովի առավել բնորոշ ձևի՝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ։

Հայոց թագավորը իր այս դրամով ներկայացված է ոչ միայն „ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ" (—արքայից արքայի) անցյալից մեզ հայտնի իր տիտղոսով, այլ նաև ΘΕΙΟΥ (աստվածային) մեծարումով (ածականի սեռական հոլովով), որպիսի ձև մինչ այս չորեքդրամյանը չի արձանագրված անտիկ Հայաստանի դրամների վրա։

դ. Ի տարբերություն Արտավազդ II-ի այլ դրամների՝ այս օրինակի երկրորդ երեսի ընդհանուր կոմպոզիցիայի մեջ չի ներկայացված հաղթանակի աստվածուհու պատկերը։ Վերջինիս բացակայությամբ թողարկված դրամները, հավանաբար, կազմում են առանձին ենթախումբ Արտավազդի արծաթ դրամների շարքում։

ե. Արտավազդ II-ի օրոք Հայաստանում թողարկված դրամների վրա տարեթիվը նշվում էր ոչ թե սելևկյան տոմարի հաշվով, այլ հայոց արքայի գահակալության տարիների թվով։

Հիմք ընդունելով կատարված տիպոլոգիական փոփոխությունները, բնականորեն հարց է ծագում՝ ինչո՞վ բացատրել նրանց առաջացումը։ Նախապես պետք է ասել, որ բացառիկ տրվյալներով դրամագիտական այս վկայությունը թեև հնարավորություն է ընձեռում դատելու այդ փոփոխությունների նշանակության մասին, սակայն, ներկայումս դժվար է որոշակի հետևության հանգել, քանի որ մեր տրամադրության տակ գտնվում է, չնայած լավ պահպանված, բայց միայն մեկ դրամ։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրամը, որպես հուշարձան, նշանակալիորեն կապված է երկրի քաղաքական պատմության հետ, հարկ է խորամուխ լինել Արտավազդ II-ի իշխանության 18-րդ տարում Հայաստանում ստեղծված քաղաքական վիճակի մեջ։ Հայտնի է, որ Արտավազդ II-ի շուրջ քսանամյա իշխանության տարիները (56—34) Հայաստանի համար եղել են միջազգային բարդ ու վերին աստիճանի լարված իրադրության տարիներ։ Գտնվելով երկու հզոր ախոյանների՝ Պարթևական Իրանի և հանրապետական Հռոմի միջև, Հայաստանը մաքառում էր իր գոյության համար, ինչպես ռազմական, այնպես էլ դիվանագիտական հնարավորություններով։ Չորեքդրամյանը թողարկված է այն ժամանակ, երբ Արտաշեսյանների թագավորությունը գտնվում էր հռոմեական սպառնալիքի ներքո։

Առաջիկայում Արտավազդ II-ի դրամների նոր գյուտերը կարող են մեծապես նպաստել ու լրացնել մեր պատկերացումներն այս շրջանի պատմության վերաբերյալ։

Խ. ՄՈՒՇԵՂՅԱՆ